ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | | *Տեսակը* | Հիմնական |
| *Տիպը* | Լրացուցիչ արձանագրություն | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | ՀՀԱԳՆՊՏ 2008.02.11/9(17) | *Ընդունման վայրը* | Ստրասբուրգ |
| *Ընդունող մարմինը* | Եվրոպայի խորհուրդ | *Ընդունման ամսաթիվը* | 28.01.2003 |
| *Ստորագրող մարմինը* | | *Ստորագրման ամսաթիվը* | 28.01.2003 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 01.02.2007 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԻԲԵՌՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ՝ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՌԱՍԻՍՏԱԿԱՆ ԵՎ ՔՍԵՆՈՖՈԲԻԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐԱՐՔՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

# Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ  Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ԿԻԲԵՌՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ՝ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՌԱՍԻՍՏԱԿԱՆ ԵՎ ՔՍԵՆՈՖՈԲԻԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐԱՐՔՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները և 2001 թ. նոյեմբերի 23-ին Բուդապեշտում ստորագրման համար բացված՝ Կիբեռհանցագործությունների մասին Կոնվենցիայի անդամ մյուս պետությունները, ներքոստորագրյալները,

նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է ձեռք բերել ավելի մեծ միասնականություն իր անդամների միջև,

նշելով, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար արժանապատվությամբ և իրավունքներով,

կարևորելով մարդու իրավունքների ամբողջական և արդյունավետ իրականացման ապահովման անհրաժեշտությունը առանց որևէ խտրականության կամ տարբերության, ինչպես դա ամրագրված է եվրոպական և այլ միջազգային փաստաթղթերում,

վստահ լինելով, որ ռասիստական և քսենոֆոբիական բնույթի արարքները առաջացնում են մարդու իրավունքների խախտում և վտանգում են օրենքի գերակայությունը և ժողովրդավարության կայունությունը,

գտնելով, որ ազգային և միջազգային իրավունքը կարիք ունի համապատասխան իրավական պատասխաններ տալու համակարգչային համակարգերի միջոցով ռասիստական և քսենոֆոբիական բնույթի քարոզչությանը,

գիտակցելով, որ նման արարքների քարոզչությունը հաճախ ենթակա է ազգային օրենսդրությամբ քրեականացման,

հաշվի առնելով Կիբեռհանցագործությունների մասին Կոնվենցիան, որը նախատեսում է միջազգային համագործակցության ժամանակակից և ճկուն միջոցներ, և վստահ լինելով ռասիստական և քսենոֆոբիական քարոզչության դեմ պայքարի վերաբերյալ գոյություն ունեցող օրենսդրական նորմերի մերձեցման անհրաժեշտության մեջ,

գիտակցելով, որ համակարգչային համակարգերը ընձեռում են խոսքի և հաղորդակցության ազատությանը նպաստող աննախադեպ հնարավորություններ,

ընդունելով, որ խոսքի ազատությունը հանդիսանում է ժողովրդավարական հասարակության էական հիմքերից մեկը և դրա առաջընթացի և յուրաքանչյուր մարդու գոյակցության զարգացման համար հիմնական պայմաններից մեկն է,

ըստ ամենայնի անհանգստացած լինելով ռասիստական և քսենոֆոբիական քարոզչության համար նման համակարգչային համակարգերի ոչ ճիշտ օգտագործման կամ չարաշահման ռիսկայնությամբ,

հաշվի առնելով խոսքի ազատության և ռասիստական ու քսենոֆոբիական բնույթի արարքների դեմ արդյունավետ պայքարի միջև պատշաճ համաչափության ապահովման անհրաժեշտությունը,

ընդունելով, որ սույն Արձանագրությունը չի հավակնում ազդելու ազգային օրենսդրության համակարգում խոսքի ազատությանն առնչվող սահմանված սկզբունքների վրա,

հաշվի առնելով այս բնագավառում համապատասխան միջազգային իրավական փաստաթղթերը և, մասնավորապես, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիան և դրան կից՝ Խտրականության ընդհանուր արգելմանն առնչվող հմ. 12 Արձանագրությունը, քրեական բնագավառում

համագործակցության մասին Եվրոպայի խորհրդի գոյություն ունեցող կոնվենցիաները, մասնավորապես, Կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիան, 1965 թ. դեկտեմբերի 21-ի՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի արգելման մասին Միավորված ազգերի կազմակերպության միջազգային կոնվենցիան, Եվրոպայի միության մասին պայմանագրի K.3 հոդվածի հիման վրա Խորհրդի կողմից ընդունված՝ ռասիզմի և քսենոֆոբիայի դեմ պայքարելու գործունեությանն առնչվող՝ 1996 թ. հուլիսի 15-ի՝ Եվրոպայի միության համատեղ գործողությունը,

ողջունելով վերջին տեղաշարժերը, որոնք հետզհետե կատարելագործում են կիբեռհանցագործության, ռասիզմի և քսենոֆոբիայի դեմ պայքարում միջազգային փոխըմբռնումն ու համագործակցությունը,

հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների ղեկավարների կողմից իրենց Երկրորդ գագաթաժողովի (1997 թ. հոկտեմբերի 10-11, Ստրասբուրգ) հիման վրա ընդունված գործողությունների ծրագիրը՝ փնտրել նոր տեխնոլոգիաների զարգացման համընդհանուր պատասխաններ՝ հիմք ընդունելով Եվրոպայի խորհրդի չափանիշներն ու արժեքները,

**համաձայնեցին հետևյալի մասին.**

## Գ Լ ՈՒ Խ I

## *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

### Հոդված 1. Նպատակը

Սույն Արձանագրության նպատակն է Արձանագրության Կողմերի միջև համաձայնությամբ լրացնել 2001 թ. նոյեմբերի 23-ին Բուդապեշտում ստորագրման համար բացված՝ Կիբեռհանցագործության մասին Կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) դրույթները՝ կապված համակարգչային համակարգերի միջոցով կատարված ռասիստական և քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման հետ:

### Հոդված 2. Սահմանում

1. Սույն Արձանագրության նպատակների համար «ռասիստական և քսենոֆոբիական նյութ» տերմինը նշանակում է՝ որևէ գրավոր նյութ, որևէ արտահայտություն կամ մտքի կամ տեսության որևէ այլ արտահայտություն, որը որևէ անձի կամ անձանց խմբի նկատմամբ քարոզում, օժանդակում կամ հրահրում է ատելություն, խտրականություն կամ բռնություն՝ ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ծագման կամ ազգային կամ էթնիկական ծագման, ինչպես նաև կրոնի հիման վրա, եթե որպես շարժառիթ օգտագործվել է հիշյալ գործոններից որևէ մեկի համար:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող տերմիններն ու արտահայտությունները պետք է մեկնաբանվեն այնպես, ինչպես մեկնաբանված են Կոնվենցիայում:

## Գ Լ ՈՒ Խ II

## *ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՁԵՌՆԱՐԿՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ*

### Հոդված 3. Համակարգչային համակարգերի միջոցով ռասիստական և քսենոֆոբիական նյութեր տարածելը

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներքին օրենսդրությամբ՝ դիտավորյալ և առանց թույլտվության կատարված հետևյալ արարքները քրեականացնելու համար.

համակարգչային համակարգի միջոցով հասարակության մեջ ռասիստական և քսենոֆոբիական նյութերի տարածումը կամ այլ ճանապարհով դրանք մատչելի դարձնելը:

2. Յուրաքանչյուր Կողմ կարող է իրեն իրավունք վերապահել քրեական պատասխանատվություն չսահմանել սույն հոդվածի 1-ին կետում նշված արարքների համար, եթե 2-րդ հոդվածի 1-ին կետում նշված նյութերը խտրականություն են քարոզում, օժանդակում կամ հրահրում, որը կապ չունի ատելության կամ բռնության հետ, նշելով, որ դրա դեմ կան այլ արդյունավետ միջոցներ:

3. Չնայած սույն հոդվածի 2-րդ կետին՝ յուրաքանչյուր Կողմ կարող է իրեն իրավունք վերապահել չկիրառելու 1-ին կետը խտրականության այն գործերի նկատմամբ, որոնց համար չի կարող նախատեսել այնպիսի արդյունավետ միջոցներ, ինչպիսիք նշված են 2-րդ կետում, ելնելով խոսքի ազատությանն առնչվող իր ազգային օրենսդրությամբ սահմանված սկզբունքներից:

**Հոդված 4. Ռասիստական և քսենոֆոբիական շարժառիթներով սպառնալիքը**

Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներքին օրենսդրությամբ՝ դիտավորյալ և առանց թույլտվության կատարված հետևյալ արարքները քրեականացնելու համար.

համակարգչային համակարգի միջոցով սպառնալը, որը զուգորդվում է իր ներքին օրենսդրությամբ սահմանված ծանր քրեական հանցագործություն կատարելով.

i) անձանց նկատմամբ՝ ռասայական պատկանելության, մաշկի գույնով, ծագումով կամ ազգային կամ էթնիկական ծագումով, ինչպես նաև կրոնով տարբերվող խմբի պատկանելու համար, եթե որպես շարժառիթ օգտագործվել է հիշյալ գործոններից որևէ մեկի համար, կամ

ii) անձանց խմբի նկատմամբ՝ որը տարբերվում է հիշյալ բնութագրերից որևէ մեկով:

**Հոդված 5. Ռասիստական և քսենոֆոբիական շարժառիթներով վիրավորանք հասցնելը**

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներքին օրենսդրությամբ՝ դիտավորյալ և առանց թույլտվության կատարված հետևյալ արարքները քրեականացնելու համար.

համակարգչային համակարգի միջոցով հասարակայնորեն վիրավորանք հասցնելը.

i) անձանց՝ ռասայական պատկանելության, մաշկի գույնով, ծագումով կամ ազգային կամ էթնիկական ծագումով, ինչպես նաև կրոնով տարբերվող խմբի պատկանելու համար, եթե որպես շարժառիթ օգտագործվել է հիշյալ գործոններից որևէ մեկի համար, կամ

ii) անձանց խմբի, որը տարբերվում է հիշյալ բնութագրերից որևէ մեկով:

2. Յուրաքանչյուր Կողմ կարող է.

ա) պահանջել, որ սույն հոդվածի 1-ին կետում նշված վիրավորանքն ունի այնպիսի ազդեցություն, որ 1-ին կետում նշված անձը կամ անձանց խումբը ենթարկվում է ատելության, արհամարհանքի և ծաղրանքի, կամ

բ) իրավունք վերապահել ամբողջովին կամ մասամբ չկիրառելու սույն հոդվածի 1-ին կետը:

**Հոդված 6. Ցեղասպանությունը և մարդկության դեմ հանցագործությունը հերքելը, մեղմացնելը, դրանց հավանություն տալը կամ արդարացնելը**

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներքին օրենսդրությամբ՝ դիտավորյալ և առանց թույլտվության կատարված հետևյալ արարքները քրեականացնելու համար.

համակարգչային համակարգի միջոցով հանրության մեջ այնպիսի նյութեր տարածելը կամ որևէ այլ ձևով դրանք մատչելի դարձնելը, որոնք հերքում, մեղմացնում, հավանություն են տալիս կամ արդարացնում են այն արարքները, որոնք համարվում են ցեղասպանություն կամ մարդկության դեմ կատարված հանցագործություն, ինչպես սահմանված է միջազգային իրավունքով և ճանաչված են որպես այդպիսիք 1945 թ. ապրիլի 8-ի Լոնդոնի Համաձայնագրով ստեղծված՝ Միջազգային ռազմական դատարանի վերջնական և հաստատված որոշումներով կամ որևէ այլ միջազգային դատարանի որոշմամբ, որը ստեղծվել է համապատասխան միջազգային փաստաթղթով, և որի իրավասությունը ճանաչել է այդ Կողմը:

2. Կողմը կարող է.

ա) պահանջել, որ սույն հոդվածի 1-ին կետում նշված հերքումը կամ մեղմացումը կատարվել է որևէ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն կամ բռնություն հրահրելու նպատակով՝ հիմնվելով ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ծագման կամ ազգային կամ էթնիկական ծագման, ինչպես նաև կրոնի վրա, եթե որպես շարժառիթ օգտագործվել է հիշյալ գործոններից որևէ մեկի համար, կամ այլ կերպ, կամ

բ) իրավունք վերապահել ամբողջովին կամ մասամբ չկիրառելու սույն հոդվածի 1-ին կետը:

**Հոդված 7. Օժանդակելը և աջակցելը**

Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են իր ներքին օրենսդրությամբ քրեականացնելու սույն Արձանագրությամբ սահմանված հանցագործություններից որևէ մեկի կատարմանն օժանդակելը կամ դրան աջակցելը, եթե դա կատարվել է դիտավորյալ և առանց թույլտվության՝ նպատակ ունենալով նման հանցագործություն կատարելը:

**Գ Լ ՈՒ Խ III**

*ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԸ*

**Հոդված 8. Սույն Արձանագրության և Կոնվենցիայի միջև կապը**

1. Կոնվենցիայի 1-ին, 12-րդ, 13-րդ, 22-րդ, 41-րդ, 44-րդ, 45-րդ և 46-րդ հոդվածները սույն Արձանագրության նկատմամբ պետք է կիրառվեն mutatis mutandis սկզբունքով:
2. Կողմերը Կոնվենցիայի 14-21-րդ և 23-35-րդ հոդվածներում սահմանված միջոցառումների շրջանակը պետք է ընդլայնեն սույն Արձանագրության 2-7-րդ հոդվածների նկատմամբ:

**Գ Լ Ո Ւ Խ IV**

*ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

**Հոդված 9. Միանալու մասին համաձայնություն հայտնելը**

1. Սույն Արձանագրությունը պետք է բաց լինի Կոնվենցիան ստորագրած պետությունների ստորագրման համար, որոնք կարող են միանալու մասին իրենց համաձայնությունն արտահայտել՝
ա) ստորագրությամբ՝ առանց վավերացման, ընդունման կամ հաստատման մասին վերապահման, կամ
բ) վավերացման, ընդունման կամ հաստատման ենթակա ստորագրությամբ՝ հետագայում վավերացնելով, ընդունելով կամ հաստատելով:
2. Պետությունը չի կարող ստորագրել սույն Արձանագրությունը առանց վավերացման, ընդունման կամ հաստատման մասին վերապահման կամ ի պահ տալ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին ծանուցագիրը, քանի դեռ ի պահ չի տվել կամ միաժամանակ ի պահ չի տալիս Կոնվենցիայի վավերացման, հաստատման կամ ընդունման մասին ծանուցագիրը:
3. Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին ծանուցագիրը պետք է ի պահ տրվի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

**Հոդված 10. Ուժի մեջ մտնելը**

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Արձանագրությանը միանալու մասին հինգ պետությունների համաձայնությունը հայտնելու օրվանից երեք ամիս ժամանակահատվածին հաջորդող ամսվա առաջին օրը՝ 9-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:
2. Յուրաքանչյուր պետության համար, որը հայտնում է իր համաձայնությունը Արձանագրությանը միանալու մասին, Արձանագրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից՝ առանց վավերացման, ընդունման կամ հաստատման մասին վերապահման, կամ վավերացման, հաստատման կամ ընդունման մասին ծանուցագիրն ի պահ տալու օրվանից երեք ամիս ժամանակահատվածին հաջորդող ամսվա առաջին օրը:

**Հոդված 11. Միանալը**

1. Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո յուրաքանչյուր պետություն, որը միացել է Կոնվենցիային, կարող է միանալ նաև Արձանագրությանը:
2. Միանալը պետք է իրականացվի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին միանալու մասին ծանուցագիրն ի պահ տալով, որը ուժի մեջ կմտնի ի պահ տալու օրվանից երեք ամիս ժամանակահատվածին հաջորդող ամսվա առաջին օրը:

**Հոդված 12. Վերապահումներն ու հայտարարությունները**

1. Կոնվենցիայի դրույթների վերաբերյալ յուրաքանչյուր Կողմի արած վերապահումները և հայտարարությունները կտարածվեն նաև սույն Արձանագրության վրա, քանի դեռ այդ Կողմը ստորագրման պահին կամ վավերացման, հաստատման, ընդունման կամ միացման մասին ծանուցագիրն ի պահ տալիս այլ հայտարարություն չի անում:
2. Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված գրավոր ծանուցմամբ յուրաքանչյուր Կողմ կարող է ստորագրման պահին կամ վավերացման, հաստատման, ընդունման կամ միանալու մասին ծանուցագիրն ի պահ տալիս հայտարարել, որ ինքն իրեն իրավունք է վերապահում կատարելու սույն Արձանագրության 3-րդ, 5-րդ և 6-րդ

հոդվածներով նախատեսված վերապահումը(ները): Միաժամանակ յուրաքանչյուր Կողմ կարող է իրեն իրավունք վերապահել սույն Արձանագրության դրույթների առնչությամբ կատարել Կոնվենցիայի 22-րդ հոդվածի 2-րդ կետով և 41-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված վերապահումը(ները)՝ անկախ այն հանգամանքից՝ Կոնվենցիայի համաձայն այդ Կողմն իրականացրե՞լ է դրա կատարումը, թե ոչ: Որևէ այլ վերապահում արվել չի կարող:

3. Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված գրավոր ծանուցագրով յուրաքանչյուր պետություն կարող է ստորագրման կամ վավերացման, հաստատման, ընդունման կամ միանալու մասին ծանուցագիրն ի պահ տալու պահին հայտարարել, որ ինքն իրեն իրավունք է վերապահում պահանջելու լրացուցիչ տարրեր, ինչպես նախատեսված է սույն Արձանագրության 5-րդ և 6-րդ հոդվածների 2-րդ կետերի «ա» ենթակետերում:

### Հոդված 13. Կարգավիճակն ու վերապահումներից հրաժարվելը

1. Կողմը, որը վերապահում է արել վերոհիշյալ 12-րդ հոդվածի համաձայն, պետք է ամբողջովին կամ մասամբ հրաժարվի նման վերապահումից այնքան արագ, որքան կպահանջեն հանգամանքները: Նման հրաժարումը կգործի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցագիրը ստանալու օրվանից: Եթե ծանուցագրում նշվում է, որ վերապահումից հրաժարվելը պետք է սկսի գործել ծանուցագրում նշված ժամկետից, և այդ ժամկետը ավելի վաղ է, քան այն օրը, երբ Գլխավոր քարտուղարը ծանուցագիրն ստացել է, հրաժարումը պետք է գործի այդ վաղ ժամկետից:

2. Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը կարող է պարբերաբար հարցում ուղարկել այն Կողմերին, որոնք, ըստ 12-րդ հոդվածի, մեկ կամ մի քանի վերապահումներ են արել՝ որպես նախադրյալ նման վերապահումից(ներից) հրաժարվելու համար:

### Հոդված 14. Տարածքային կիրառում

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է ստորագրման կամ վավերացման, հաստատման, ընդունման կամ միանալու մասին ծանուցագիրն ի պահ տալու պահին նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կկիրառվի սույն Արձանագրությունը:

2. Յուրաքանչյուր Կողմ կարող է ցանկացած ավելի վաղ ժամանակ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղարկված հայտարարությամբ ընդլայնել սույն Արձանագրության կիրառումը հայտարարության մեջ նշված որևէ այլ տարածքի համար: Նման տարածքի առնչությամբ Արձանագրությունն ուժի մեջ կմտնի հայտարարությունը Գլխավոր քարտուղարի ստանալու օրվանից երեք ամիս ժամանակահատվածին հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Նախորդ կետերի համաձայն արված յուրաքանչյուր հայտարարություն դրանում նշված յուրաքանչյուր տարածքի առնչությամբ կարող է հետ վերցվել Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղարկված ծանուցագրով: Նման հետ վերցնելը կգործի այդպիսի ծանուցագիրը Գլխավոր քարտուղարի ստանալու օրվանից երեք ամիս ժամանակահատվածին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

### Հոդված 15. Չեղյալ հայտարարելը

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարել սույն Արձանագրությունը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղարկված ծանուցագրի միջոցով:

2. Նման չեղյալ հայտարարումը կգործի ծանուցագիրը Գլխավոր քարտուղարի ստանալու օրվանից երեք ամիս ժամանակահատվածին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

### Հոդված 16. Ծանուցելը

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, սույն Արձանագրության մշակմանը մասնակցած ոչ անդամ պետություններին, ինչպես նաև Արձանագրությանը միացած կամ միանալու համար հրավիրված յուրաքանչյուր պետության պետք է ծանուցի.

ա) յուրաքանչյուր ստորագրման մասին.

բ) վավերացման, հաստատման, ընդունման կամ միանալու մասին ծանուցագիրն ի պահ տալու մասին.

գ) 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների համաձայն սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու յուրաքանչյուր ամսաթվի մասին.

դ) սույն Արձանագրությանն առնչվող յուրաքանչյուր այլ ակտի, ծանուցագրի կամ հաղորդակցման մասին:

Ի հավաստումն վերոշարադրյալի՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճորեն լիազորված, ստորագրել են սույն Արձանագրությունը:

Կատարված է Ստրասբուրգում, 2003 թ. հունվարի 28-ին, մեկ բնօրինակով, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն

էլ հավասարազոր են, որոնք ի պահ կտրվեն Եվրոպայի խորհրդի արխիվներին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճենները կփոխանցի Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության, սույն Արձանագրության մշակմանը մասնակցած ոչ անդամ պետություններին և միանալու համար հրավիրված յուրաքանչյուր պետության:

***Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թ. փետրվարի 1-ին:***